Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԲՌ-24/2 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

02 փետրվարի 2024թ.
ժամը՝ 12:00

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ազարյան, Ա. Թումանյան, Ս. Գարանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Բենզին, ռեգուլյար	98 000 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 31.01.2024թ.-ին ժամը 11:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 01.02.2024թ.-ին ժամը 11:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	«Մաքս Օիլ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02662703, ք. Երևան, Էրեբունի 12/4, maxoil.llc@mail.ru, հեռ. 094 52 67 51
2	«ՖԼԵԾ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01808789, ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30, flashltdtender@gmail.com, հեռ. 010 53 42 33

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԲՌ-24/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Գնման առարկայի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	Բենզին, ռեգուլյար	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	98 000 000	79 216 666.67	20 %	95 060 000	79 216 666.67	20 %	95 060 000.00
		ՖԼԵԾ ՍՊԸ		79 543 333.34	20 %	95 452 000	79 543 333.34	20 %	95 452 000.00

Աճուրդն ամփոփվել է 01.02.2024թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ**-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

7.1. Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները:
- Ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «Տեխնիկական բնութագիր» սյունակում ավելացնել ճշտված բենզալցակայանների հասցեների ցանկը:

Տավուշի մարզին վերաբերվող հատվածում 3-րդ կետով ներկայացված փողոցում հասցե նշված չէ, քանի որ այդ հատվածում առկա է երկու լցակայան, 7-րդ կետով նշված հասցեում լիցքավորման կետ չկա:

Գեղարքունիքի մարզի մասով 1-ին, 6-րդ, 7-րդ կետերում նշված չէ հասցեները և/կամ փողոցի առկայությունը, 8-րդ կետով հասցե նշված չէ:

Արագածոտնի մարզի մասով 5-րդ կետում հասցե նշված չէ: Իսկ Ապարան և Թալին քաղաքները դիտարկել որպես խոշոր քաղաքներ:

Կոտայքի մարզի մասով հստակ չէ 1-ին և 3-րդ կետերով ներկայացված լիցքավորման կետերի գործող լինելու հանգամանքը, չգործող լինելու դեպքում ենթակա է շտկման:

Վայոց Ձորի մարզի մասով 4-րդ կետով նշված չէ լիցքավորման կետի հասցեն:

Սյունիքի մարզի մասով 2-րդ և 4-րդ կետերով նշված լիցքավորման կետերի առկայությունը ենթակա է հստակեցման:

Արարատի մարզի մասով 3-րդ և 4-րդ կետերով նշված հասցեներում լիցքավորման կետեր չկան, իսկ 5-րդ կետում կոնկրետ հասցեն նշված չէ:

Արմավիրի մարզի մասով 3-րդ և 4-րդ կետերով տեղեկատվությունը հստակ չէ, նշված չէ կոնկրետ գործունեության հասցեն:

Նաիրի Զարյան 72/6 հասցեն նշված է և Արաբկիր վարչական շրջանում և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

Նոր-Նորք վարչական շրջանում ներկայացվել է լիցքավորման կետ Բագրատունյանց 44/1 հասցեով, սակայն Բագրատունյանց փողոց նշված վարչական շրջանում չկա: Դավիթաշեն վարչական շրջանում նշվել է Անաստաս Միկոյան 118 հասցեն: Լիցքավորման կետի առկայության հանգամանքը նշված հասցեում ենթակա է ճշտման:

Էրեբունի վարչական շրջանի մասով ներկայացված 2-րդ կետով նշված հասցեի լիցքավորման կետի առկայությունը ճշտել:

Անհրաժեշտ է ներկայացված լցակայանների շտկված ցանկով ներկայացնել առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված յուրաքանչյուր հասցեում կտրոններով սպասարկման հիմքը /պայմանագրային հիմունքներով, սեփական, վարձակալություն/, ինչպես նաև այլ ընկերության կողմից կտրոնի սպասարկման դեպքում տվյալ ընկերության ապրանքային նշանը: Հարկ է նշել, որ շտկումն իրականացնելիս չխախտվի մարզերի խոշոր քաղաքներում լցակայանների առկայության սկզբունքը, ինչպես նաև Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում երկու լիցքավորման կետերի առկայության պահանջը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԲՌ-24/2** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 16.02.2024թ.-ին Համակարգի միջոցով ծանուցել **«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 20.02.2024թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 20.02.2024թ. ժամը 12:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 20.02.2024թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **մասնակիցը** սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ**-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

21.02.2024թ. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Արմեն Ազարյան

_____ Աննա Թումանյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան